Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 301 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 705-Ա
որոշման

«ՆՇԱՆ ԵՎ ԱԻԴԱ ԿԱՐԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արմավիրի մարզի Փարաքար համայնքում կառուցել Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջ, որտեղ Փարաքար համայնքի և այլ մարզերի երիտասարդները հնարավորություն կունենան ստանալ խորը ինժեներական և տեխնոլոգիական գիտելիքներ, թվային արհեստների և արվեստների ոլորտի հմտություններ, կներգրավվեն արտադրական աշխատանքներում: Շինարարական աշխատանքների ավարտից անմիջապես հետո Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ նախատեսվում է լիցենզավորում՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին նմանատիպ միջին մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնելու համար: Նորաստեղծ հաստատության յուրահատկությունը կայանում է նրանում, որ բոլոր մասնագիտացումներում պարտադիր է լինելու թվային հմտությունների կիրառումը բոլոր ոչ թվային ոլորտներում: Քոլեջի նեղ մասնագիտական ուղղություններն են լինելու՝ 1) խորը ինժեներական ուղղություն. 2) թվային արհեստ և արվեստ:

		Հանգստյան օրերին քոլեջ են հաճախելու աշակերտներ բոլոր մարզերից՝ համատեղ թիմային աշխատանք իրականացնելու, մենթորների օգնությամբ տեխնոլոգիական արտադրանքներ ստեղծելու նպատակով: Քոլեջում անվճար կրթություն կստանան Փարաքար համայնքի անապահով ընտանիք-ների անդամները, պատերազմի մասնակիցները, միայնակ մայրերը, սահմանամերձ մարզերի անապահով ընտանիքների երեխաները: Շաբաթ և կիրակի օրերին բոլոր մարզերի երիտասարդների համար համատեղ թիմային աշխատանքներն ու արտադրական մենթորությունը կիրականացվի անվճար հիմունքներով: Քոլեջի գլխավոր առաքելությունը կլինի միջմարզային համագործակցությունն ու երիտասարդների համախմբումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի անվան» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պոռշյան 2/1, տարածք 18, ՀՎՀՀ՝ 00240464)
4.	Ծրագիրը կատարողը	«Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամ (Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Ի. Գասպարյան փողոց 2, ՀՎՀՀ՝ 04445077)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Փարաքար խոշորացված համայնք, կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	619,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար խոշորացված համայնք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) քոլեջի շենքի կառուցում՝ 186,925,396 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ը. 2) ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի կառուցում՝ 58,194,308 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը. 3) շենքի արտաքին, ներքին հարդարում և հարակից տարածքի բարեկարգում՝ 373,880,296 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) քոլեջի շենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 186,925,396 դրամ առանց ավելացված արժեքի հարկի. 2) ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման և ջրահեռացման) կառուցման աշխատանքների իրականացում՝ 58,194,308 դրամ առանց ավելացված արժեքի հարկի. 3) շենքի արտաքին, ներքին հարդարման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 373,880,296 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Փարաքարի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ